54. ՕԽԽԱՀ

Գելի չի ելի մե տղամ գելի, աս տղան կպնի կը հորը յախան, թը.— Ուզես չուզես թագավորին աղջիկը ինձի համար պիտի ուզես։

— Օղո՛ւլ,— կըսե հարը,— խելքդ գլոխդ ժողվե, յորդնիդ գյորա օտվիդ էրկնցու, դո՜ւ վե՜վ, թագավո՜րը վեվ։ Թագավորը հեչ քեզի աղջի՞կ կուտա, գլոխ գալու բա՞ն է։

Հարը տեսնի կ'օր տղան ձութ է էղե ջանին կպե, հոքին խալաս էնելու խաթեր, գելլե կէրթա խնամախոսությյան քարին կը նստի։ Թագավորը խնդա կը վրան ու գլխեն գյաֆ էնելու համար կըսե թը.— էկեր տղադ սև ու ճերմակը բերեց, կուտամ կը։

Հարը փոր փոշման գուքա տուն։ Գուքա տուն, տղին կըսե թը.— Քեզի չըսի՞ հալիդ կեցի, տիա թափիտ դրեդ, ըսաց թը. «էկեր սև ու ճերմակը բերե, կուտամ կը»։

— Լավ,— կըսե տղան,— քալե ինձի մե տեղմ նոքար տու, աշխատիմ սև ու ճերմակը փերեմ։

Ագոնք էրկուսը գելլեն կէրթան, շատն ու քիչ։ աստված գիտե, կէրթան մե պաղ ախպրիմ ռաստ գուքան։ Վրա գըյնին մե կուշտմ ջուր խմեն կը ու օխխա՜յ կէնեն։ Օխխա՜յ կէնեն թը չը, ախպըրին ակեն մե էխտիար հալևորմ գուա գուքա կը ու կըսե թը.— Ինչի՞ կանչեցիք։

Ասոնք զարմանան կը ու կըսեն թը.— Վե՜վ քեզի կանչեց։

Թը.— Դուք Օխխա՜յ չըսի՞ք, իմ անունս Օխխայ է։

— Հա,— կըսե հարը,— չիտեինք օր քու անունդ Օխխայ է։

— Է, ադ տղադ ո՞ւր կը տանիս,— հարցնե կը Օխխայը։

Թը.— Տանիմ կ'օր մեկիմ քով նոքար տամ։

— Ինձեն լավին քովը չես կրնա տա, ըե իմ քովս տու,— կըսե Օխխայը։

Հարը ռազի գըլլի, հախը կառնե կը, տղան կուտա ադոր, ինքը գելլե կէրթա։ Օխխայը ադ մանչուն կառնե, ախպըրին ակեն կէրթա նես, իրան օդան։ Ինքը նստի կը ու ադոր կըսե թը.— Առ ինի թարքեն աս թուղթը, ան համայիլը փե։

Մանչը փերե կը, Օխխայը բանձր ձենով կարթա կը ու կենա կուտա տղին, օր տեղը թնե։ Ասոր բանը սալթ ադ գըլլի։ Օխխայն օր իրեն թղթերը կարթա կը, աս տղան անկչները կախե, լավ անկաշ կէնե ու բիտտուն սորվի կը։

Ադ Օխխայը մե ըռնտիկ աղջիկըմ կունենա, ադոր սիրտը կպչի կը աս տղին։ Գողտուց խրատ կուտա թը.— Հարըս օր քեզի հարցնե թը բանըմ սորվար, չըլլի թը ըսես սորվա, ան սայթին գլոխդ զարնե կը, հեչ մի թվացնե թը բան գիտես։

Տղին վատան թըմմի կը, հարը գուքա օր տանի։ Ուատան տղին հարցնե կը թը.— Օղուլ, հեչ ի՞նչ սորվար։

Տղան թը.— Ի՞նչ սորվեցուցիր, օր ի՞նչ սորվեի։

— Ադպես է օրա, ել քընը,— կըսե Օխխայն ու տղին ճամփե կը։

Հարը կառնե տղին կէրթա։

Կէրթա, ճամփան տղան քիչըմ ետ կը մնա ու մե հրեղեն ձիմ դառնա գուքա հորն առաջը ֆոֆռա կը։ Հարը.— Օվակ, Օվակ,— ձենե կը,— արի հրեղեն ձիմ է էկե, բռնենք։

Օվակը ձի է դառե, ո՞ւրտից պիտի գա։ Ձին թուչի կէրթա, ալի տղա դառնա, գուքա կը հորը քովը։ Հարը վրան նեղենա կը թը.— Վե՞ր ջանլամն էիր չքվե, հրեղեն ձիմ էր էկե, քովս ըլլեիր, բըռնեինք։

— Է, ինչ էնեմ, մատս ֆոտ չէի էրե,— կըսե տղան։

Քիչմա կէրթան, տղան հորը կըսե թը.— Քիչըմ կամաց քընը, ես ահան էկա։

Տղան կենա ետ կը մնա, մե կարմիր կովըմ կը դառնա, կէրթա հորը քով, տռֆիկ տալեն ասթին անթին վազզե կը։ Հարը չապալամիշ գլի օր բռնե, չի կըրնա։ Տղին ձենե կը, տղա չկա։ Կովը ձեռ-

քե գելլե։ Տղան գուքա, հարը վրան ճվա, բոռա կը թը.— Ուր չըքվար, կովըմ էկավ, բռնեինք, ձմեռս բոլ բոլ կթեինք, ուտեինք։

Տղան ձեն չի հանե։ Քիչըմ ա կանցնի՝ սիրուն օչխարմ դառնա կը, հարը կենա չապալամիշ գըլլի օր բռնե, չի կըրնա։ Բիրտան օչխարը աղամ դառնա կը, կաշե՝ Օվակն է, զարմանա մնա կը։ Տղան առաշ գուքա, կըսե,— Ափա՜ր, ան հրեղեն ձին ու կովն ա, օր էկան, ես էի, ըշտը ադպես հունըրներ եմ սորվե։ Կէրթանք քաղաք ես կենտ ձի, կով, օչխար գըլլիմ դու տար ծախե, հըմը չըլլի թը գյամը, կրկալը յա կապը հետը տա՜ս, իմացի-օր, ակյար չտվիր՝ ես կենա գուքամ տուն, հըմը օր տվիր՝ ալ պրծա, ինձի ազատում չի ըլլի։

Կէրթան տուն, տղան հրեղեն ձիմ գըլլի, հարը գյամեն քաշի տանի կը մեյդանը ծախելու։ Հազար ու մեկ մուշտարի թափին կը, սահաթվանըմ մեջ ձին լավ գնով ծախվի կը։ Հարը գյամը կառնե գուքա տուն։

Իրիկուն գըլլի, չի ըլլի, մեմա աշես տղան պուպո՜ւտ նես մըտավ։ Մեկալ օրը կարմիր կովըմ էղավ, հարը կենա տարավ լավ գնով ծախեց, կրկալն առավ, էկավ տուն։ Տղան իրիկունը կենա ետ դառցավ, էկավ տուն։

Մեկալ օրը տղան մե սիրուն օչխարըմ դառցավ, հարը կապը ցկեց ճիտը, տարավ մեյդանը։ Շենլիքը էկավ թոփ էղավ օչխարին գլխուն, բազար էրավ, գին տվեց, ան էր՝ պիտի կապեին կոռեին, մե ճերմակ միրուք փիր էխտիարմ էկավ, մեկին տաս գին տվեց, առավ օչխարը։ Մարթը գուզեր օր կապը քանտե, հալևորը չըթողեց։

— Չէ,— ըսավ մարթը,— կապը չեմ ծախե։

— Ահան քեզի ասքան ա ավելի,— ըսավ հալեվորը,— կապն ա տու։

Շենլիքը վրա թափավ թե.— Ադ կապն ա ի՞նչ է, օր դոզաս կը վրան, է՜րկու շահու բան, աշխարքին փարան կուտա, տու էրթա։

Մարթը մե անքամ խափվի, փարաները կառնե, օչխարը կապը հետը կուտա, կէրթա։

Ադ հալեվորը կառնե օչխարը, կէրթա ախպրին ակեն նես մտնի կը. դու մի ըսե ադիկ Օխխայն է էղե։

— Ես քեզի մարիֆաթ սորվեցուցի, օր էրթաս աշխարքը քանդե՜ս,— կըսե Օխխայը։— Աղջի, թեզ սաթըրը բեր, օր ասոր գլոխը զարնեմ։

Աղջիկը տեսնի կ'օր իրեն սիրած տղան է, վազե սաթըրը կառնե պատին ծակը կոխե կը, գըյնի ասթին անթին, սաքի թը ման

գուքա։ Էպպեի օր շոլոր կուտա, կըսե կը թը.— Ձկա, չիտեմ ո՞ւր ես դրե։

— Քոռացա՞ր ասօր,— կըսե կը հալևորը,— արի, արի օչխարը դուն բռնե, ես գտնիմ, կսկուծ բռնե չփախչի։

Աղջիկը բռնե կը օչխրին կապեն, հարը կէրթա սաթըրը փընտրտելու։ Քիչմ օր հեռենա կը աղջիկը սաքի թը օչխարը սանը պիտի կապե, կապը ճիթը փաթթե կ'ու բաց կը թողնե։ Հըմը ադ սահաթին օչխարը դոխ կը դառնա ու թռչի կը։ Օխխայն օր տեսնի կը, թը տղան դոխ էղավ փախավ, ինքն ա չալաղան դառնա գըյնի ետիթին։ Գըյնի ետիթին ան կէրթա՝ ասե ետիթիեն, մազ մնա կ'օր հասնի. դոխը թագ դառնա գըյնի թագավորին գլխուն, չալաղանն ա թագավոր կը դառնա, գիշնի թագավորին առաշը, կըսե.— Էրկինքն էի ելե, թագս ընկավ գլոխդ, տու։

Թագավորը վերցնե կ'օր տա, թագը վարդ դառնա կը, Օխխայն ա աշըղ դառնա, սազը կը չալե ու վարդը գուզե։ Թագավորը կէնե թե վարդը տա աշըղին, վարդը ութը հատ կորեկ կը դառնա, թափի կը վար. աշըղն ա խորոզ գըլլի, ադ կորեկները կուտե։ Ինչըղ գըլլի, մե կորեկըմ թագավորին փեշերուն մեշը մնա կը, խորոզն օր օխտը կորեկը կուտե, ասս մե կորեկը աղվես գըլլի խորոզին խեխտե կը։

Թագավորը մատ պականց կը մնա։ Խորոզին օր խեխտե կը, ըիրտան տղամ դառնա կայնի կը թագավորին առաշը։ Թագավորը կաշե, ճանչե կը օր, իրեն աղջիկը ուզողն էր, կըսե.

— Ղորթ օր սև ու ճերմակը փերիր, աղջիկս քեզի հալալ է, տվի օր տվի։

Արթըղ օխտը զօր, օխտը գիշեր հարսնիք կէնեն, առոք փառոք պսակեն կը։

Անոնք հասան իրենց մուրադին, դուք ա հասնիք ձեր մուրադին։